



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

Ղ Ե Կ Ա Վ Ա Ր

Երևան – 10, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

« »

2018 թ.

N

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ - ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
պարոն ԱՐԱ ՍԱՂԱԹԵԼՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սաղաթեյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-262-9.02.2018-ՊԻՄԻ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը.

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի մարտի 7-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 234 - Ա որոշումը:

Հարգանքով՝

ՎԱՀԵ ՍՏԵՓԱՆՅԱՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-262-9.02.2018-ՊԻՄԻ-011/0)
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Օրենքի նախագծի առնչությամբ Հայաստանի Հանրապետության կառավարությունը առաջարկություններ չունի: Այդուհանդերձ, գտնում ենք, որ նախագծի ընդունումը գործնական տեսանկյունից ավելի խորը հիմնավորման կարիք ունի:

Միաժամանակ հայտնում ենք, որ ներկայումս ամփոփման փուլում է գտնվում Հայաստանի Հանրապետության նոր քրեական օրենսգրքի նախագիծը, որն առաջիկայում Հայաստանի Հանրապետության կառավարության հավանությանն արժանանալուց հետո կներկայացվի Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով: Հետևաբար, գործող Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում հատվածական և ոչ հրատապ փոփոխություններից խուսափելու և առաջացած խնդիրներին համապարփակ լուծումներ տալու նպատակով առաջարկում ենք նախագծի դրույթներին անդրադառնալ Հայաստանի Հանրապետության նոր քրեական օրենսգրքի նախագծի քննարկումների շրջանակներում:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ Ո Ր Ո Շ ՈՒ Մ

7 մարտի 2018 թվականի N 234 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի տեղակալ Արտակ Ասատրյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Պ-262-9.02.2018-ՊԻՄԻ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

2018 թ. մարտի 7
Երևան



Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ
ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2003 թվականի ապրիլի 18-ի քրեական օրենսգրքի 364.1-րդ հոդվածում՝

1. 1-ին մասից հանել «իր կամ այլ անձի համար գույք, գույքի նկատմամբ իրավունք, արժեթղթեր կամ որեւէ այլ առավելություն ստանալու նպատակով» բառերը:

2. լրացնել նոր՝ 5-րդ մաս. «5. Սույն հոդվածի իմաստով մոլեխաղը՝ գույք, գույքի նկատմամբ իրավունք, արժեթղթեր կամ այլ առավելություններ ստանալու նպատակով երկու կամ ավելի մասնակիցների միջեւ կամ կազմակերպչի կողմից սահմանված կանոններով շահումի վերաբերյալ ռիսկի հիման վրա համաձայնությամբ խաղ է:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍՊՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ
ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումը բխում է «մոլեխաղ» եզրույթի օրենսդրական սահմանման բացը լրացնելու անհրաժեշտությամբ:

Քաղաքացիական հասարակությունում «մոլեխաղերի» ի հայտ գալուց և դրանց լայն տարածումից հետո պետության պոզիտիվ պարտականությունն է դարձել պաշտպանել հանրության բարոյականության սկզբունքը, ինչպես նաև ապահովել անձանց իրավունքների և օրինական շահերի ունահարման անթույլատրելիությունը:

Այնուամենայնիվ, շատ երկրներում ոչ թե արգելվում, այլ նշված իրավահարաբերությունների կարգավորման շրջանակներում թույլատրվում է անցկացնել մոլեխաղեր կամ այլ շահումով խաղեր:

Բացառություն չէ նաև Հայաստանի Հանրապետությունը, որն օրենսդրորեն կարգավորել է նշված իրավահարաբերությունները: Այսպես, «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» ՀՀ օրենքը կարգավորում է շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի խաղատների գործունեության կազմակերպման և կարգավորման հետ կապված հարաբերությունները, ինչպես նաև սահմանում է դրանց նկատմամբ պետական վերահսկողությունը: «Վիճակախաղերի մասին» ՀՀ օրենքը՝ համանման եղանակով կարգավորում է նշված հարաբերությունները և սահմանում պետական վերահսկողության շրջանակները: Նշված օրենքների կարգավորման ոլորտի վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ պետությունը ուղղակիորեն վերահսկողություն է իրականացնում քննարկվող իրավահարաբերությունների նկատմամբ՝ հաշվի առնելով դրանց յուրահատկությունը և հնարավոր հետևանքները:

Քննարկվող երկույթը իր օրենսդրական կարգավորումն է ստացել նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, որի 32-րդ հոդվածի 1-ին մասի ուժով մոլեխաղերով հրապուրվելու հետևանքով իր ընտանիքը նյութական ծանր դրության մեջ դրած քաղաքացու գործունակությունը կարող է դատարանով սահմանափակվել՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով և նրա նկատմամբ սահմանվել հոգաբարձություն:

Միևնույն ժամանակ, հաշվի առնելով մոլեխաղերին մասնակցող անձանց կամարտահայտությունը՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի «Խաղեր և գրազ կազմակերպելու ու դրանցում մասնակցելու հետ կապված պահանջները» վերտառությամբ 1039-րդ հոդվածը դատական պաշտպանության բացառություն է սահմանել: Այսպես, նշված հոդվածի համաձայն՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց պահանջները՝ կապված ռիսկի վրա հիմնված խաղեր և գրազ (մոլեխաղեր) կազմակերպելու կամ դրանց մասնակցելու հետ, ենթակա չեն դատական պաշտպանության, բացառությամբ այն անձանց պահանջների, ովքեր խաղերին կամ գրազին մասնակցել են խաբեության, բռնության, սպառնալիքի կամ իրենց ներկայացուցչի՝ խաղերի կամ գրազի կազմակերպչի հետ չարամիտ համաձայնության ազդեցության ներքո, ինչպես նաև նույն օրենսգրքի 1040 հոդվածի 5-րդ կետում նշված պահանջների:

Միևնույն ժամանակ կան երկրներ, որոնք քրեական օրենսդրությամբ արգելում են մոլեխաղերի մասնակցությունը, կազմակերպումը կամ դրանց այլ կերպ աջակցումը:

Օրինակ՝ Ռուսաստանի Դաշնության քրեական օրենսգրքով արգելված է մոլեխաղեր ապօրինի կազմակերպելը և իրականացնելը, որի օբյեկտը տնտեսական գործունեությունն է: Մոլորվայի քրեական օրենսդրքը պատասխանատվություն է նախատեսում անչափափասներին հակաբարոյական գործողություններ կատարելու՝ մոլեխաղերին մասնակցելուն հրահրելու համար: Ֆրան-

սիայի քրեական օրենսգրքի համաձայն՝ մոլեխաղերի իրականացման համար «տուն պահելու» դեպքում անձը ենթարկվում է քրեական պատասխանատվության: Միաժամանակ, հետխորհրդային մի շարք երկներ՝ Ուկրաինա, Բելոռուս, Վրաստան և այլն, քրեական օրենսդրությամբ որպես զինվորական կարգի դեմ ուղղված հանցագործություն չեն նախատեսել մոլեխաղեր կազմակերպելը կամ դրանց մասնակցելը:

Այնուամենայնիվ, հաշվի առնելով մեր պետության ներկայիս քաղաքականությունը և Հայաստանի Հանրապետության անվտանգության, պաշտպանության, տարածքային ամբողջականության, և նրա սահմանների անձեռնմխելիության կարևորագույն սահմանադրական սկզբունքները՝ պետությունը որոշակի արգելքներ է նախատեսել նշված իրավահարաբերությունների շրջանակներում գործառույթներ իրականացնող անձանց, մասնավորապես, ՀՀ զինված ուժերում ծառայողների համար: Այսպես, ՀՀ քրեական օրենսգրքի 364.1-րդ հոդվածը, որպես զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործություն, պատասխանատվություն է նախատեսում զինծառայողի կողմից զորամասում, ծառայության վայրում կամ զինվորական ծառայության պարտականությունները կատարելու ընթացքում մոլեխաղերի մասնակցելու կամ դրանց կազմակերպելու համար:

Այս հանցակազմը նախատեսված չի եղել 1961թ. ՀԽՍՀ քրեական օրենսգրքով, ինչպես նաև չի ամրագրվել 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում: Նորանուծությունը կատարվել է «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ եվ լրացումներ կատարելու մասին» 2013թ. ապրիլի 30-ի ՀՕ-34-Ն օրենքով, որի անհրաժեշտությունը զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանրորեն վտանգավոր որոշ արարքների՝ քրեական օրենսգրքում նախատեսված չլինելն էր, իսկ նպատակը՝ իրավահարաբերությունների կարգավորումն էր և ՀՀ զինված ուժերի մարտունակության ապահովումը:

Դրական գնահատելով նշված հանցակազմի՝ քրեական օրենսգրքով նախատեսված լինելու հանգամանքը, պետք է փաստել, որ այնուամենայնիվ առկա է իրավական բաց «մոլեխաղ» եզրույթի օրենսդրական սահմանման և ընկալման առումով: Ի դեպ, ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքը (179-րդ հոդված), առանձնացնում է մոլեխաղի մի քանի տեսակներ (թղթախաղ, զառախաղ, պտուտախաղ, «մատնոց» և այլն), սակայն նույնպես չի սահմանում մոլեխաղի հասկացությունն ու հիմնական հատկանիշները: Արդյունքում, «մոլեխաղ» հասկացությանը տրվում են տարաբնույթ և հակասական մեկնաբանություններ: Ուստի, արդիական է նշված եզրույթի սահմանման հիմնախնդիրը թե՛ տեսական, թե՛ գործնական առումով, քանի որ շատ հաճախ արարքի քրեաիրավական որակման հետ կապված խնդիրներ են առաջանում, հետևաբար, անհաժեշտ է սահմանել մոլեխաղի հասկացությունը և առանձնացնել դրա հիմնական հատկանիշները, որպեսզի յուրաքանչյուր կոնկրետ դեպքում հնարավոր լինի որոշել արարքի՝ հանցակազմի իմաստով մոլեխաղ հանդիսանալու հանգամանքը:

ՀՀ քրեական օրենսգրքի 364.1-րդ հոդվածի հանցակազմի օբյեկտիվ կողմը դրսևորվում է զինծառայողի կողմից զորամասում, ծառայության վայրում կամ զինվորական ծառայության պարտականությունները կատարելու ընթացքում մոլեխաղերի մասնակցելով՝ իր կամ այլ անձի համար գույք, գույքի նկատմամբ իրավունք, արժեթղթեր կամ որևէ այլ առավելություն ստանալու նպատակով: Այսինքն, օրենսդիրը ամրագրելով կոնկրետ նպատակ, միաժամանակ, արձանագրել է տվյալ հանցակազմի համար մեղքի դիտավորյալ ձևի՝ ուղղակի դիտավորության առկայության հանգամանքը:

«Մոլեխաղ» եզրույթը լեզվաբանական տարբեր հիմք ունի: Օրինակ՝ հայերենում «մոլեխաղ» նշանակում է այնպիսի խաղ, որտեղ հաղթելը կամ պարտվելը կախված է պատահականությունից, ոչ թե խաղացողի հմտություններից, ֆրանսերենում՝ «jeu de hazard», անգլերենում՝ «gambling» բառերը նշանակում են պատահականության վրա հիմնված խաղ, ռուսերենում՝ «азартная игра» բառը եկել է «азардовать» բառից, որը նշանակում է դիսկի դիմել:

Տեսական գրականությունում առկա «մոլեխաղ» եզրույթի տարաբնույթ սահմանումների ուսումնասիրության արդյունքում կարելի է առանձնացնել դրա ընդհանուր հատկանիշները. •

•

:

:

:

:

:

3/0160/01/15
N

<< >>
2014

500

2/0060/01/14
2014

24.000

/0007/01/14

25.000

364.1 1-

«

»:

:

189.1- 103.1- 2- 4- 190- 5
, 205- 3-
, 215.1- 6-
, 2171- 3-
, 341.1- 2-
: